111 Տիրոջ ահեղ գահուն առջև

1. Տիրոջ ահեղ գահուն առջև
Խոնարհեցեք սուրբ բերկրանքով,
Գիտցե՛ք, թե Տերն է սոսկ Աստված,
Կյանք ու մահ կուտա Իր ձեռքով:

2. Աստվածային Իր աջ հզոր
Մեզ արարեց ու մարդ ըրավ,
Երբ զերդ ոչխար էինք մոլոր,
Կրկին մեզ Իր փարախ բերավ:

3. Իր հոտն ենք. Իրն է մեր հոգին
Եվ մահացու այս կերպարանք,
Ի՞նչ փառք անվերջ տանք սրտագին,
Հզոր Աստված, Քո սուրբ անվան:

4. Մտնենք դռներդ օրհներգությամբ,
Մինչև երկինք ելլե մեր ձայն.
Եվ այս երկրի բյուր բարբառներ
Տաճարիդ մեջ արձագանք տան:

5. Անսահման է ողորմությունդ,
Եվ սերդ անհուն, անմահ է, Տե՛ր.
Ճշմարտությունդ՝ ժայռ հաստատուն,
Կեցցե՛, երբ որ անցնին դարեր: